ԷԴՈՒԱՐԴ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Հայաստանում շուկայական հարաբերությունների ձևավորման և մասնավոր սեփականության իրավունքի հաստատմանն ուղղված առաջին քայլերը հողի սեփականաշնորհումն ու հողային վերափոխություններն էին: Դրանց սկիզբը դրվեց 1991թ. հունվարին ընդունված «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով»[1] և նախարարների խորհրդի մի շարք որոշումներով:

1991-1992թթ. արդյունաբերության փլուզման ընթացքին զուգահեռ, մեծ կոլեկտիվ և պետական տնտեսությունները, որոնք գյուղատնտեսության ոլորտի գերակշռող մասն էին կազմում, ցրվեցին, իսկ վարելահողերի 70 տոկոսը սեփականաշնորհվեց և բաժանվեց անհատ գյուղացիական տնտեսությունների միջև: Առաջացան գյուղացիական անհատական և կոլեկտիվ տնտեսություններ: Հողի սեփականաշնորհման արդյունքում գյուղական փոքր ֆերմերային համակարգն ընդգրկեց մոտ 335 հազ. ընտանիք: Վերջիններս սեփականացրեցին փոքր մասնատված հողամասեր: Նրանց փոխանցվեց հողերի 66 տոկոսը: Սեփականաշնորհվեց անասունների 80 տոկոսը, մնացած հիմնական միջոցները՝ գրեթե ամբողջությամբ:[2] Սակայն լուրջ թերություններով և անարդարացի իրականացված սեփականաշնորհման հետևանքով անասունների գլխաքանակի մեծ մասը գյուղերում անցավ մի քանիսի, այդ թվում նաև գյուղի և գյուղատնտեսության հետ որևէ առնչություն չունեցողների ձեռքը: Դրա արդյունքը եղավ 1992-1993թթ. անասունների զանգվածային մորթը, որը զգալիորեն վտանգեց անասնապահության զարգացումը:

Հայաստանում հողային վերափոխումներից հետո ընտանեկան ֆերմայի միջին չափը մեկ-երկու հեկտար էր՝ կազմված միջին թվով երեք հողամասերից, որոնցից մեկը ոռոգելի էր, իսկ երկուսը՝ ոչ: Դրանք հաճախ գտնվում էին իրարից 10-15 կմ հեռավորության վրա, ինչն անբարենպաստ էր գյուղացու արդյունավետ գործունեության համար: Բոլոր ֆերմաներից 58 տոկոսի մոտ հողատարածքը տատանվում էր 0,5հա-2,5հա-ի միջև: 10 տոկոսի

[1] Հայաստանի Հանրապետության օրենքը «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին», Եր.1991,Հայաստանի գործող օրենքների ժողովածու /1990-1995/, Երևան, 1995, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգիրք» Երևան 1991, Հայաստանի գործող օրենքների ժողովածու /1990-1995/, Երևան, 1995:
[2] Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ.113, ց.165, գ. 448, թ. 13:

մոտ այն գերազանցում էր 5հա, իսկ առավելագույն չափը 12-13հա էր: Ավելի մեծ ընտանեկան ֆերմաներին տրվեց ավելի ցածր որակի հող՝ կենտրոնացված լեռնային շրջաններում, որոնք այնքան էլ արդյունավետ չէին: Այսպիսով Հայաստանում հողի բաշխումը ըստ արժեքի կարող էր նույնիսկ ավելի հավասար լինել, քան բաշխումը ըստ չափի:[3]

Առավել վատթար էր վիճակը անասունների, անասնապահական շինությունների, տեխնիկական միջոցների, տեխնոլոգիական համալիրների և գյուղատնտեսական մյուս գույքերի մասնավորեցման գործընթացներում: Համաձայն «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջների՝ անասնապահական շինությունները, տեխնիկական միջոցները, տեխնոլոգիական համալիրները և գույքը իրացվում են աճուրդային վաճառքի կարգով, առաջին հերթին տվյալ բնակավայրի բնակիչներին կամ նրանց խմբերին: Մինչդեռ բոլոր շրջաններում, բացառությամբ առանձին դեպքերի, դրանք վաճառվել են առանց աճուրդի: Որպես օրինակ բերենք Սիսիանի, Վայքի, Մեղրու, Թալինի և այլ շրջանները: Սպիտակի շրջանի Մեծ Պարնի գյուղխորհրդի նախագահ Վ.Բայադյանն առանց հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշման և առանց աճուրդի գյուղի երկու անասնագոմերը «սեփականաշնորհել է» գյուղի մի քանի բնակիչների: Շահումյանի շրջանի 18-րդ և 22-րդ կոլտնտեսությունների հիմնական միջոցները, գյուղատնտեսական տեխնիկան, շինությունները վաճառվել էին կոոպերատիվներին, անհատ անձանց:[4] Շրջանցելով օրենքը մի շարք տեղերում լուծարքային հանձնաժողովները չէին ձևակերպել, գյուղխորհուրդների հաշվեկշիռներ չէին տեղափոխել նախկին կոլտնտեսություններին , խորհրտնտեսություններին պատկանող հիմնական և շրջանառու միջոցները, որոնք էլ թալանի և ավերածության տեղիք էին տալիս: 1995թ. ավերված և թալանված վիճակում էին գյուղխորհուրդների հաշվեկշռում եղած Հրազդանի Արտավազ գյուղի չսեփականաշնորհված երեք, Մեղրածոր գյուղի երկու անասնագոմերը, Քաղսիի երեք ոչխարանոցները, Էջմիածինի Արշալույս, Սամադատ գյուղերի Մշակույթի տան շենքերը, Արշալույս գյուղի սղոցարանը, Սևանի Ծովագյուղի Մշակույթի տան շենքը:[5] Այսպիսին էր պատկերը գրեթե ողջ հանրապետությունում: Այն ուղեկցվեց բազմաթիվ սխալներով, անարդարություններով, ապօրինություններով, որոնք նպաստեցին գյուղացիության արագ շերտավորմանը, գյուղական բնակչության զանգվածային աղքատացմանը:

Գյուղում ձևավորվեցին արտադրատնտեսական նոր հարաբերություններ:

---

[3] Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, Երևան, 2002, էջ 35:
[4] ՀԱԱ , ֆ.571, ց. 12, գ. 568,թ. 12:
[5] Նույն տեղում, թ.1:

Շուկայական արտադրատնտեսական հարաբերությունների հաստատումը Հայաստանի նոր գյուղացիության, որպես սոցիալական խավի, ձևավորման հիմքն է, որը նպաստում է նաև նրա գիտակցության և հոգեբանության վերափոխմանը: Գյուղացիությունը մտավ աշխատելու և ապրելու նոր պայմանների մեջ: Ինչպես ասում են կեցությունն է որոշում գիտակցությունը: Գյուղացիության նոր կեցությունն աստիճանաբար փոխում է նրա հոգեբանությունը: Կոլեկտիվիզմի հիմունքներով գործող գյուղացին դարձել էր մասնավոր սեփականատեր: Նրա մոտ ձևավորվում և խորանում են մասնավոր սեփականատիրոջ գծեր:

Ինչպես հայտնի է, գիտակցությունն ու հոգաբանությունն ավելի դանդաղ են փոխվում, քան կեցությունը: Մանավանդ, որ Հայաստանի գյուղացիությունը հոգեբանորեն բոլորովին պատրաստ չէր այդ նոր արմատական փոփոխություններին, այն գրեթե հանկարծակի եկավ: Եվ պատահական չէր, որ գյուղացիությունը չէր ուզում միանգամից հրաժարվել հանրային տնտեսություններից, շատ տեղերում գյուղացիները որոշեցին պահպանել այդ տնտեսությունները: Միայն վերևից ցուցաբերված հարկադրանքի ուժով նրանք անցան անհատական տնտեսության: Այնուհետև ոչ ճիշտ ձևով իրականացված վերափոխումները, հատկապես սեփականաշնորհման ժամանակ դրսևորված անարդարությունները, բացասաբար ազդեցին գյուղացիության հոգեբանության վրա: Եթե հանրային տնտեսության պայմաններում ստեղծվել էր շատ թե քիչ հավասարություն, այսինքն գյուղական բնակչությունն ուներ հավասար վերաբերմունք արտադրության միջոցների նկատմամբ, այն կոպիտ կերպով խախտվեց սեփականաշնորհման ժամանակ, առանձին ընտանիքներ հայտնվեցին շատ թե քիչ բարվոք վիճակում, իսկ շատերն էլ բռնեցին ծայր աղքատության ուղին: Դա տակնուվրա արեց գյուղացու հոգեբանությունը, նա ականատես եղավ թալանի, զավթումների, կատարյալ սոցիալական անարդարությունների, պղտորվեց նրա հոգին, որը խորհրդային շրջանում գտնվում էր խաղաղ ու հանգիստ վիճակում: Սեփականաշնորհումը նպաստեց գյուղական բնակչության շերտավորմանը, տեղի էին ունենում շահերի բախումներ, ձևավորվում էին առանձին խմբեր՝ այսպես կոչված նոր թիմեր, շահերի ընդհանրության և ազգակցական, բարեկամական կապերի հիման վրա: Ընդ որում գյուղում ձևավորվեց «թիմերի» երկու տարբերակ: Դրանցից առաջինն ընդգրկում էր հիմնականում «կոմունիստական նոմենկլատուրայի» ներկայացուցիչներին, որոնք իշխանության լծակների օգտագործման միջոցով մեծ օգուտներ ստացան սեփականաշնորհումից: Երկրորդ տարբերակն արդեն ընդգրկում էր նորի գաղափարախոսներին, որոնք արցախյան շարժման հետ կապված ոգևորվածության պայմաններում կարողացան մեծացնել իրենց ազդեցությունը գյուղական միջավայրում: «Հաճախակի են եղել տարբեր խմբերի բախումները ,

կապված տարբեր շահերի հետ»:[6] Մասնավոր սեփականությունը գյուղական բնակչության շրջանում առաջ բերեց պառակտումներ, տարբեր շերտեր, սոցիալական հակասություններ, որոնք բնականաբար փոխում էին գյուղացիության բարոյահոգեբանական կացությունը: Այս առնչությամբ չենք կարող համաձայնել ուսումնասիրողներից մեկի՝ Մ. Գաբրիելյանի հարցադրման հետ: Նա նշում է. «Կատարվեց սոցիալ-մասնագիտական խմբերի ու ենթախմբերի համահարթեցում, կառուցվածքային տեսանկյունից բազմահազար գյուղացիությունը վերածվեց մեկ մասնագիտական խմբի՝ անհատական կամ գյուղացիական կոլեկտիվ տնտեսության վարողի»:[7] Նախ ճիշտ չէ սոցիալական տարբերակումը շփոթել մասնագիտականի հետ և երկուսը ներկայացնել որպես մեկ ամբողջություն: Այնուհետև ինչպես արդեն նշել ենք, ագրարային վերափոխումներն առաջ բերեցին գյուղական բնակչության սոցիալական մեծ փոփոխություններ, վերացան նրա հիմնական տարրերը՝ կոլտնտեսային գյուղացիությունը, գյուղական բանվոր դասակարգը, արմատապես փոխվեց նաև գյուղական մտավորականությունը: Սկսեց ձևավորվել գյուղացիության նոր սոցիալական խումբը, որն իր գործունեությունը կազմակերպում է մասնավոր սեփականության հիմքի վրա, այսինքն՝ անհատական տնտեսություն վարող գյուղացիության խումբը, որը այդ գործընթացում սկսեց շերտավորվել և ինչ-որ սոցիալական համահարթեցման մասին խոսք լինել չի կարող: Տվյալ հեղինակը մի քանի տող հետո ինքը հակասում է իրեն, գրելով թե. «Կոլեկտիվում գյուղատնտեսական տեխնիկայի, գյուղատնտեսության նշանակության կառույցները օգտագործման հավասար հնարավորություններ ունեցող գյուղացիները վերածվեցին սպասարկողի (սեփականատիրոջ) ու օգտագործողի: Անասնագոմեր ու այլ շինություններ գնեցին հիմնականում անասնապահները, անասնագլխաքանակի մեծ մասը սեփականաշնորհած անհատները: Գյուղացիների մեծ մասը զրկվեց դրանց օգտագործման հնարավորությունից, փոքր թվով տնտեսություններ ստացան ընդամենը մի քանի տարի առաջ հանրային համարվող ունեցվածքը տնօրինելու, յուրացնելու հնարավորություն»[8]: Ինչ համահարթեցման մասին է խոսքը: Սոցիալապես թերևս համահարթեցված էր խորհրդային գյուղացիությունը, որը տեղի ունեցած վերափոխումների հետևանքով սկսեց շերտավորվել:

Դատելով ամեն ինչից անհնար է չնկատել, որ հողի մասնավորեցմամբ գյուղացին ի սկզբանե բախվեց մի շարք չլուծված խնդիրների. ակնհայտ է գյուղատնտեսության և գյուղի զգալի ետընթացը: Այս առումով չի կարելի համաձայնվել պրոֆ. Է. Մինասյանի այն մտքի հետ, որ «ագրարային ոլորտի

---

[6] Մ. Գաբրիելյան , Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Երևան, 2001, էջ 35:
[7] Նույն տեղում, էջ 39:
[8] Մ. Գաբրիելյան , Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, էջ 39-40:

արմատական բարեփոխումները բարերար ազդեցություն ունեցան գյուղացիության աշխատանքային գործունեության բարձրացման և աշխատողների կազմի երիտասարդացման վրա»:[9] Սակայն աշխատանքային գործունեությունը չի կարող բարձրանալ, թերևս հեղինակը նկատի ունի աշխատանքի արտադրողականության բարձրացումը: Գուցե դա ճիշտ էր սեփականաշնորհումից հետո առաջին մեկ-երկու տարիների համար, սակայն սեփականաշնորհման արդյունքում անհատ գյուղացին մնալով ինքն իր հոգսերի հետ, առանց գյուղտեխնիկայի, սերմերի ու պարարտանյութերի և առանց համապատասխան միջոցների, հարկադրված անցավ էքստենսիվ տնտեսվարման՝ ձեռքի ֆիզիկական աշխատանքի կիրառմամբ, որը բնավ չէր կարող բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը: Տարեցտարի գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի արտադրողականության անկումը ակնհայտ էր, մանավանդ որ արդյունաբերության ոլորտից դեպի գյուղատնտեսություն տեղի ունեցած աշխատուժի ներհոսքը բարձրացրեց արտադրության ընդհանուր ծավալները, սակայն նվազեցրեց արդյունքը յուրաքանչյուր աշխատողի հաշվով: «1990-ականներին արդյունաբերությունն արագորեն կրճատվեց, իսկ գյուղատնտեսությունը դարձավ ավելի աշխատատար: 2003թ. գյուղատնտեսության կշիռը ընդհանուր զբաղվածության մեջ կազմում էր 42 տոկոս, սակայն ՀՆԱ-ում նրա կշիռը կազմում էր միայն 21 տոկոս: Արդյունաբերությունից դեպի գյուղատնտեսություն աշխատուժի մեծ հոսքի արդյունքում արտադրողականությունը գյուղատնտեսությունում անկում ապրեց: Արձանագրված համեստ աճը չբարելավեց գյուղատնտեսության ոլորտի վիճակը, քանի որ այն չեզոքացվեց գյուղատնտեսական արտադրանքի հարաբերական գների անկմամբ»:[10]

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության ոլորտում աշխատողների կազմի երիտասարդացման վերաբերյալ հեղինակի կարծիքին, ապա այն չի արտացոլում իրերի իսկական վիճակը: Եթե սեփականաշնորհման սկզբում նկատելի էր գյուղատնտեսության մեջ զբաղվածների երիտասարդացումը, ապա շուտով այդ գործընթացը դադարեց: Հատկապես տնտեսական և էներգետիկ ճգնաժամի տարիներին հանրապետությունից արտագաղթեցին շատ գյուղաբնակներ, գերազանցապես երիտասարդներ: Այս երևույթը բնորոշ էր հանրապետության ողջ ազգաբնակչությանը թե՛ քաղաքային և թե՛ գյուղական վայրերում:

1990-2003թթ. միջև ընկած ժամանակամիջոցում շուրջ 1մլն. հայաստանցիներ արտագաղթեցին հայրենիքից և հեռացածների շուրջ երկու երրորդը լավ կրթված և աշխատանքային տարիքում /20-44տարեկան/ գտնվող

---

[9] է. Սինասյան, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում 1990-2003թթ.,Երևան, 2003, էջ 82:

[10] Աճ և աղքատության կրճատում Հայաստանում, նվաճումներ և մարտահրավերներ,Արժույթի միջազգային հիմնադրամ, 2006, էջ 25:

տաղմարդիկ էին: Հայտնի է նաև, որ գյուղական վայրերից արտագնա աշխատանքի մեկնելը բնորոշ է առաջին հերթին գյուղի երիտասարդությանը: Հետևապես գյուղում մնում էին հիմնականում մեծահասակները, որոնք էլ զբաղված էին գյուղատնտեսության մեջ: Փաստորեն տեղի ունեցավ գյուղական բնակչության «ծերացում», որի հետևանքով գյուղացիական շատ տնտեսություններ լրիվ ծավալով չեն մշակվում:

Ագրարային վերափոխումների գործընթացում գյուղացիության, սոցիալական խմբի մոտ սկսեցին ձևավորվել բնորոշ նոր գծեր, հատկություններ, նոր կեցվածք, արտադրական-տնտեսական գործունեության նոր պայմաններ:

Գյուղացին սոցիալ-իրավական տեսանկյունից հայտնվեց բոլորովին նոր վիճակում: Հողի սեփականաշնորհման հետևանքով հողի նկատմամբ սեփականատիրական և նրա վրա տնտեսվարելու իրավունքը միացվեց: Մինչ այդ գյուղացին թեպետ ուներ հողը օգտագործելու, նրա վրա տնտեսվարելու իրավունք, սակայն հողի սեփականատերը չէր: Գյուղացու այս նոր կացությունը էական մեծ փոփոխություններ առաջ բերեց նրա կյանքում՝ որակապես նոր բնույթ հաղորդելով գյուղացիների հասարակական և միջանձնային հարաբերություններին. մանավանդ որ հենց սկզբից հողի սեփականաշնորհումը ուղեկցվեց գյուղացիության արագ՝ շերտավորմամբ, որտեղ յուրաքանչյուր շերտն ուներ կոնկրետ շահեր ու նպատակներ: Մենատնտես գյուղացիները ևս ունեին շահերի հակասություն: Գյուղացիության այս նոր շերտերը մտնում էին նոր արտադրատնտեսական հարաբերությունների մեջ: Ավելորդ չէ նկատել, որ հողային հարաբերությունների կարգավորմանը, գյուղացու սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված բազմաթիվ և բազմապիսի օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը, կառավարության որոշումները, որպես կանոն, գյուղում չափազանց դանդաղ և դժվարությամբ էին գործադրվում: Դա պայմանավորված էր մեծ մասամբ տեղական իշխանությունների, գյուղում ազդեցիկ դիրք ձեռք բերած մարդկանց, նրանց համախոհների, ազգականների հատվածական շահերով, արհեստական խոչընդոտներով, որով նրանք իրենց շահերին էին հարմարեցնում և ծառայեցնում իրավական դաշտը: Այս արգելապատնեշներով էին պայմանավորված նաև գյուղում տնտեսական հարաբերությունների բավականին թույլ զարգացած բնույթը: Գյուղացիության շրջանում նկատելի է ակտիվության բավականին ցածր մակարդակ: Դա նկատելի է հատկապես գյուղացիների հողի սեփականաշնորհման վկայականների ձեռք բերման, փաստաթղթերի ձևակերպման հարցում: Այն բացատրվում է մի կողմից գյուղացիների հին ավանդական տնտեսական փոխհարաբերությունների պահպանողականությամբ, մյուս կողմից նոր շուկայական հարաբերությունների նկատմամբ վախի և անվճռականության դրսևորմամբ: Ընդ որում վերջինս անհիմն չէ և բխում է տարբեր մակարդակի իշխանությունների և

ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ անվստահությունից: Դրա վկայություններից մեկն էլ անշարժ գույքի հետ կապված գործարքների չափազանց փոքր քանակն է:

Ի տարբերություն խորհրդային շրջանի՝ այժմյան մենատնտես գյուղացիությունը ստացավ արտադրական-տնտեսական գործունեության ազատություն, վերացավ այն հարկադրանքը, որ կար հանրային տնտեսությունների գոյության ընթացքում: Այդ փոփոխության հիմքը նոր համակարգի հաստատման գործընթացն էր, որ սկսվել էր գյուղում: Ինչպես հայտնի է, խորհրդային վարչահրամայական համակարգը գյուղացուն զրկել էր ինքնուրույն գործունեությունից: Նրա արտադրական գործունեությունը երկատված էր, հանրային տնտեսության աշխատանքներին մասնակցում էր որպես կատարող և ոչ ինքնուրույն որոշումներ կայացնող: Գյուղացու ինքնուրույնությունը դրսևորվում էր միայն իր օժանդակ տնտեսությունում, որը նրա աշխատանքային գործունեության շատ փոքր մասն էր կազմում: Օժանդակ տնտեսությունում էր գյուղացին հանդես գալիս որպես լիարժեք արտադրող, որը որոշում էր ինչ ցանել, ինչքան ցանել և ինչ անել, որ շատ բերք ստանա: Այդ հարցերը հանրային տնտեսությունում լուծում էին տնտեսությունների ղեկավարները՝ վերադաս մարմինների թելադրանքով:

Նոր շրջանում վերացավ գյուղացու արտադրական գործունեության երկատվածությունը: Նա արդեն ուներ իր սեփական տնտեսությունը, որը վարում է ինքնուրույն կերպով, առանց դրսից տրվող հրահանգների: Սակայն նկատենք, որ հանրային տնտեսություններն ապահովում էին գյուղացու նվազագույն կենսապայմանները և նա չէր ընկնում ծայրահեղ աղքատության գիրկը: Այժմ արդեն գյուղացին ինքը պետք է ապահովի իր և իր ընտանիքի նվազագույն կենսապայմանները: Եվ թվում էր, թե այդ խնդրի լուծումը առանձին դժվարություն չէր ներկայացնի, քանի որ գյուղացին ստացել էր գյուղատնտեսական արտադրության գլխավոր միջոցը՝ հողը: Բայց փորձը ցույց տվեց, որ միայն հողը բավական չէր, շատ թե քիչ նորմալ տնտեսական գործունեություն ծավալելու համար, պետք է լինեն անհրաժեշտ պայմաններ, որոնք նա չուներ, չէր ստանում անհրաժեշտ աջակցություն, գյուղացին մնացել էր իր հողի հետ և չգիտեր թե այն ինչպես արդյունավետ օգտագործի, որ ստեղծի տանելի տնտեսություն: Գյուղում կատարված վերափոխումների հետևանքով գյուղացիությունը կորցրեց մասնագիտացումները: Նրանց զգալի մասի համար գյուղատնտեսությունը դարձավ հիմնական զբաղմունք, ձևավորվեցին խառը զբաղմունքով տնտեսություններ: Գյուղացին և՛ հողի մշակ է, և՛ արտադրող, և՛ գյուղատնտես, և՛ գյումքերքը իրացնող: Հասկանալի է, որ այս ամենը համատեղելը ավելացրել է գյուղացու զբաղվածության ժամանակը, սակայն չի նպաստել նրա աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: Ճիշտ է հողը սեփականաշնորհվեց, մասնավորեցվեց, տրվեց գյուղա-

ցուն, սակայն գյուղատնտեսության մյուս ենթակառուցվածքների վերացումը տնտեսական կապերի բացակայության պատճառով դրանց մի մասի կազմալուծումը, մյուսների սեփականաշնորհումը գյուղացու համար առաջացրեցին լուրջ դժվարություններ: Դրանք գյուղացուն մղեցին վարելու բնափակ տնտեսություն: Հայ գյուղացին հոգեբանորեն դարձավ եսակենտրոն և էգոիստ: Նա իր տնտեսական ողջ գործունեությամբ ավելի շատ լուծում է իր ընտանիքի գոյության պահպանման, քան հասարակական պահանջմունքների բավարարման խնդիրներ: ՀՀ Գլխավոր դատախազության 1995թ. տեղեկանքը արձանագրում է, որ բացառությամբ մի քանի տնտեսությունների, գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները ոչ միայն չեն կատարել օրենքի պահանջը՝ այն է առաջին երեք տարում վճարել կայուն բնամթերային հարկ, այլև անասունները վաճառելուց կամ մորթելուց հետո չեն վճարել դրանց ձեռքբերման գնի տասնապատիկ չափը՝ պետությանը պատճառելով խոշոր չափերի հասնող նյութական վնաս: Այսպես հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովների որոշումներով Եղեգնաձորի շրջանի Գլաձոր գյուղում 331 գլուխ խոշոր և 1610 գլուխ մանր, Հրազդանի շրջանի Բջնի գյուղում 926 գլուխ խոշոր և շուրջ 4000 գլուխ մանր, Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղում 720 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ սեփականաշնորհվել են գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին: Գյուղխորհրդի գործկոմները այդ տնտեսությունների հետ պայմանագրեր են կնքել պետությանը կաթ, միս, բուրդ հանձնելու վերաբերյալ: Սակայն վերջիններս բնամթերային հարկերը չեն վճարել:[11]

Գրեթե նույնն է պատկերը նաև անհատական գյուղացիական տնտեսություններում: Քանի որ ֆերմերային և ոչ ֆերմերային գործունեությունից ստացված կանխիկ եկամուտը սահմանափակ է, հայ ֆերմերները չեն նպաստում ազգային խնայողություններ և ներդրումներ կատարելու այնքան, որքան կարող են: 1997թ. ֆերմերների կեսից ավելի քիչ մասն է վճարել հողի հարկերը ամբողջությամբ, չնայած որ դա միջին հաշվով մոտավորապես 14 ԱՄՆ դոլլար էր կազմում: Նույնն էր պատկերը նաև ջրի վարձի դեպքում: Ֆերմերային գործունեությամբ զբաղվող ընտանիքները ապահովում են խնայողությունների միայն 6 տոկոսը, որը շատ ցածր ցուցանիշ է միջազգային չափանիշներով:[12]

Գյուղացիության առջև ծագած բազմաթիվ լուրջ դժվարություններից մեկն էլ այն էր, որ նա պետք է մտներ շուկայական հարաբերությունների մեջ: Սակայն դա նույնը չէր, որ հանրային տնտեսության պայմաններում իր ստացած

---

[11] ՀԱԱ, ֆ. 571, ց. 12, գ. 568, թ.13:

[12] Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, Երևան, 2002, էջ 39:

բերքի մի փոքր մասը վաճառում էր շուկայում: Գյուղացիական անհատական տնտեսության գլխավոր ֆունկցիան ապրանքային արտադրության իրացումն էր, որն այնքան էլ դյուրին գործ չէր, նոր էր գյուղացու համար և պահանջում էր որոշակի կարողություններ, հմտություններ, շուկայի գաղտնիքներին տիրապետելու ունակություններ: Կամա թե ակամա գյուղացին ի վերջո պետք է ծևավորվի որպես ապրանք արտադրող շուկայի պահանջները կատարող: Այդ պահանջն էր թելադրում մասնավոր սեփականությունը, մասնավոր տնտեսությունը:

Կյանքը գյուղացու մոտ ծևավորվում է նոր գիտակցություն, մասնավոր սեփականատիրոջ գիտակցություն՝ իր բոլոր գործնական դրսևորումներով: Սեփականաշնորհման ընթացքում ծագած անհավասարության, անարդարության խորացումը բացասաբար է ազդել գյուղացիության հոգեբանության, նրա գիտակցության վրա, մանավանդ, որ առաջ եկան խմբեր, թիմեր, որոնք ձգտում էին ավելի շատ պոկել, ավելի շատ բաժին ստանալ: Իսկ այդ երևույթը կասեցնող, արգելակող ուժեր չկային, պետությունը ձեռքերը լվացել էր և չէր խառնվում, չէր կարգավորում գործընթացը:

Խորհրդային շրջանում գյուղացիության կյանքն ու գործունեությունը գտնվում էին պետության և նրա ղեկավար ուժի՝ կոմունիստական կուսակցության հսկողության տակ, որն էլ կարգավորում էր ծագող բոլոր հարցերը; Նոր ժամանակներում փոխվեց գյուղացիության հասարակական, կազմակերպական ծևերը, համայնքը դարձավ այն հիմնական օղակը, որը կոչված է լուծել գյուղացիության հուզող հարցերը: Ըստ ՀՀ Սահմանադրության.«Հայաստանի հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները: Մարզերը կազմված են գյուղական և քաղաքային համայնքներից»: Սակայն համայնքը դեռևս չի կատարում իր վրա դրված պարտականությունները, որոշակի դեր չունի գյուղացիության արտադրական-տնտեսական գործունեության կազմակերպման գործում: «Գյուղն այսօր ինքնակազմակերպման ու ինքնակարգավորման հստակ լծակներից զրկված օրգանիզմ է, որի զարգացումները հաճախ կարող են լինել անկանխատեսելի ու անկառավարելի»:[13] Կապիտալիստական տնտեսակարգի պայմաններում սովորաբար շուկան է գլխավոր կարգավորիչը, սակայն Հայաստանում անցման այս շրջանում ամեն ինչ թողնել շուկային, ճիշտ չէր: Պահանջվում էր պետությունից լայնորեն իրագործել կարգավորիչ դերը, որը չապահովեց: Բավական երկար ժամանակ, գրեթե մի ամբողջ տասնամյակ անհատական գյուղացիական տնտեսությունների կյանքն ու գործունեությունը գրեթե դուրս էր պետության ղեկավարման դաշտից: Սեփականաշնորհումից հետո գյուղացին կանգնեց լուրջ դժվարությունների առջև թե արտադրության կազմակերպման և թե

[13] Մ. Գաբրիելյան, նշված աշխատությունը, էջ 68:

արտադրանքի իրացման հարցերում: Պահանջվում էր դրանց հաղթահարման գործում պետության անմիջական մասնակցությունը, պետական հովանավորություն: Այդ, անշուշտ, չի նշանակում, որ խնդիր է դրվում վերականգնել խորհրդային տնտեսական համակարգը: Այլ պետությունն իր հարկային ու վարկային քաղաքականությամբ կարող է լրջորեն աջակցել այդ նորաստեղծ անհատական տնտեսություններին, նրանց տրամադրելով երկարաժամկետ գյուղատնտեսական մատչելի վարկեր, շատ փոքր տոկոսով, ապահովել անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկա, օգնել արտադրանքի իրացման գործում: Խորհրդային շրջանի համեմատությամբ միանգամայն հակառակ պատկերն էր ստացվել. եթե մի ժամանակ, հանրային տնտեսության պայմաններում, պետությունը գյուղացիության նկատմամբ մեծ խնամակալություն էր իրականացնում, ապա նոր պայմաններում նրան թողել էր ինքն իր հոգսերի հետ: Խոշոր կոլեկտիվ տնտեսությունը լայն հնարավորություն ուներ իր արտադրական տնտեսական կյանքի կազմակերպման հարցում: Անհատական գյուղացիական տնտեսությունները զրկվեցին այդ հնարավորությունից: Եվ պատահական չէր, որ ագրարային վերափոխումների սկզբում գյուղացիության մի զգալի հատվածն ընտրեց գյուղատնտեսական կոլեկտիվ տնտեսությունը: 1991թվականին ստեղծվեցին 24204 գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Սակայն հետագա տարիներին ինչ-ինչ պատճառներով դրանց թիվը խիստ կրճատվեց և 2000թվականին մնացել էին ընդամենը 268 կոլեկտիվ տնտեսություն: Իսկ դրան հակառակ անհատական գյուղացիական տնտեսությունների թիվն այդ ժամանակահատվածում կրկնապատկվեց 148,3 հազարից հասնելով ավելի քան 320 հազարի: Ճիշտ կլիներ գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների պահպանումը, որոնց շրջանակներում գյուղացիության կյանքն ավելի բարվոք ընթացք կունենար: Դրա անհրաժեշտությունը ապացուցում է կյանքը: Ներկայումս նկատելի է դառնում աստիճանաբար գյուղացիական տնտեսությունների խոշորացման միտումը կոոպերացիայի և այլ ձևերով (օրինակ Աշոցքի մարզի պանրի արտադրության ՓԲԸ-ը, որը 2004-2005թվականներին ավելի շատ արտադրանք է տալիս, կոոպերացիայի խոշորացման ճանապարհով):

Նոր ժամանակներում փոխվեցին գյուղացու տնտեսական գործունեության սկզբունքները: Ընդհանուր համապետական պահանջարկի և սկզբունքի փոխարեն գյուղացու տնտեսական գործունեության հիմքում դրվեց անձնական պահանջմունքների բավարարման սկզբունքը: Վերը նշված հեղինակը գրում է, թե «գյուղացին (ընտանիքը) կարող է սահմանափակվել միայն կենսապահովման գյուղատնտեսությամբ, արտադրելով միայն այն և այնքան, որքան հարկավոր է ընտանիքի գոյության նվազագույնն պահովելու համար»:[14]

---

[14] Մ. Գաբրիելյան, նշված աշխատությունը, էջ 41:

Հենց խնդիրն այն է, որ գյուղացին չէր կարող սահմանափակվել կենսապահովման գյուղատնտեսությամբ, պարզապես նրան այնպիսի պայմանների մեջ դրեցին, որ միայն դա կարող էր անել: Շուկայական հարաբերությունների պայմաններում գյուղացին անպայմանորեն կծգտի որքան հնարավոր է շատ արտադրել, որի համար պետք է լիներին անհրաժեշտ պայմաններ: Գյուղացու այդ ձգտման խորացումն ու իրագործումը կապահովեն նրա մասնակցությունը համապետական խնդիրների լուծմանը: Հանրային տնտեսությունը գյուղացու մոտ ձևավորել էր հասարակական, համապետական գիտակցություն, որը ագրարային վերափոխումները վերացրին: Նոր պայմաններում պահանջվում է ստեղծել այնպիսի տնտեսական մեխանիզմներ, որոնք գյուղացու մոտ կրկին կնպաստեն նրա նոր գիտակցության ձևավորմանը, որ իր արտադրական-տնտեսական գործունեության մեջ նա ունենա շատ թե քիչ մտահոգություն հասարակական-պետական շահերի ապահովման համար: Այս առումով կարևոր է գյուղական համայնքի արդյունավետ գործունեությունը, որն ապահովում է կապը պետության, հասարակության և գյուղացիական անհատական տնտեսության միջև: Համայնքը պետական միջամտության հետ մեկտեղ նպաստում է ինքնակազմակերպման ու ինքնակարգավորման գործընթացների ծավալմանը: Ագրարային վերափոխումներին զուգահեռ ձևավորվում են համայնքային հարաբերությունները: Համայնքը չի կարող միատարր օրգանիզմ լինել, նրա ներսում տեղի են ունենում սոցիալական շերտավորման գործընթացներ՝ հարուստ, միջին, աղքատ աստիճանակարգմամբ: Հասարակության բևեռացումն ընդգրկել է նաև գյուղական համայնքը: Ընդ որում, ի տարբերություն քաղաքի, գյուղական հարուստների խավի ձևավորումը դեռևս չի ավարտվել, գտնվում է կայացման գործընթացում: Շատ որոշակի է գյուղական բնակչության աղքատացման ավելացումը: Չի ձևավորվել նաև միջին խավը:

Նշված խնդիրների հաղթահարման, գյուղի առաջընթացը, գյուղատնտեսության զարգացումն ապահովելու նպատակով վերջին տարիներին ձեռնարկվել են մի շարք քայլեր: Գյուղատնտեսությունը, ագրոարդյունաբերությունը հանրապետության տնտեսության մեջ անհրաժեշտ չափով ընդգրկելու համար խրախուսվում են բանկային ծառայությունների և միջազգային առևտրական կապերի ընդլայնումը: Առաջադրված է ընդհանուր խնդիրների հետ միասին անցնել հասցեագրված սուբսիդավորման, ընդլայնել կաթնամթերք մշակող և գյուղատնտասական մթերքներ վերամշակող ձեռնարկությունները, կազմակերպել համակցված կերերի արտադրություն, տեղական բազայի վրա սերմերի արտադրություն, գյուղատնտեսական մասնագետների պատրաստում ֆերմերային տնտեսությունների համար և այլն: 2006թ. «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրով նախատեսված 235 մլն ԱՄՆ դոլլարով գումարը նպատակաուղղվելու է հանրապետության գյուղական ճանապարհների վերականգնմանը, գյուղացիական տնտեսությունների զարգացմանը, գյուղում աղքա-

տության կրճատմանը: Ներդրումները չնայած կխթանեն գյուղերում հողերի խոշորացմանը և գործազրկության մեծացմանը, սակայն դրանք հնարավոր է կանխել հարկային , իրատեսական քաղաքականության և երկարաժամկետ ու մատչելի վարկերի տրամադրման շնորհիվ: Վերը նշված քայլերի իրականացումը կարող է երաշխիք դառնալ գյուղական բնակչության աղքատության կրճատման, գյուղացիությայն սոցիալական կարգավիճակի կայունացման, նրա ներսում սոցիալական տարբեր խմբերի և շերտերի համագործակցության, հայ գյուղացու կողմից համապետական շահերի գիտակցման, նրա հոգեբանության առողջացման համար: Այն կնպաստի իշխանությունների նկատմամբ անվստահության բարդույթի հաղթահարմանը և հայ գյուղացու տնտեսական ակտիվության խթանմանը:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. ՀԱԱ, ֆ.113, գ.165, գ.448:
2. ՀԱԱ, ֆ. 571, գ.12,գ.568:
3. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան, 2003:
4. Աճ և աղքատության կրճատում Հայաստանում, նվաճումներ և մարտահրավերներ, արժույթի միջազգային հիմնադրամ, 2006:
5. ՀՀ օրենքը « Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» Երևան 1991թ, Հայաստանի գործող օրենքների ժողովածու / 1990 -1995/ Եր. 1995, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք, Երևան,, 1991, Հայաստանի գործող օրենքների ժողովածու /1990 -1995/, Երևան, 1995:
6. Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1999, վիճակագրական ժողովածու, Երևան, 2001:
7. Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, Երևան, 2002:
8. Մ. Գաբրիելյան, Հայաստանի հանրապետության արդի գյուղացիությունը, Երևան, 2001:
9. Է. Մինասյան, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի հանրապետությունում 1990 -2003 թթ., Երևան, 2003:
10. Գևորգ Պողոսյան, Հայ հասարակությունը 21- րդ դարասկզբին, Երևան, 2006: